ՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ XIV–XV ԴԴ.
(Հայաստանի հարավային շրջանների օրինակով)

ԳՈՌ ԵՐԱՆՅԱՆ

Քրիստոնեության ու իսլամի տարածումով աշխարհը երկփեղկվեց կրոնական երկու խոշոր համայնքների միջև: Որպես հետևանք՝ էթնիկ ինքնությունն աստիճանաբար երկրորդվեց կրոնական պատկանելությանը, կրոնական ինքնագիտակցությունը գերիշխող դարձավ, մի բան, որ միջնադարի գլխավոր առանձնահատկություններից էր: Հայաստանում քրիստոնեության ամրապնդմանը զուգընթաց «հայ» և «քրիստոնյա» բառերը դառնում են համարժեքներ. քրիստոնեությունից հրաժարումն ու իսլամ ընդունումն ընկալվում էր որպես ազգուրացություն, էթնիկ ակունքներից օտարացում:

Արդյո՞ք շատ են հայերի՝ մահմեդական դառնալու ու բռնի իսլամացման դեպքերը և արդյո՞ք դրանք Հայաստանի էթնոժողովրդագրական պատկերի փոփոխության վրա լուրջ ազդեցություն ունեցել են: Այս հարցերի պատասխանը ստանալու համար փորձենք XIV–XV դդ. կտրվածքով վեր հանել Հայաստանի մահմեդական նվաճողների կրոնական քաղաքականությունը, ինչպես նաև ներկայացնել Հայաստանի հարավային շրջաններում մահմեդականության ընդունման մեզ հայտնի դեպքերն ու քննել դրանց պատճառները:

Մոնղոլները, որ գրավեցին Հայաստանն ու շուրջ մեկուկես դար իշխեցին, ո՛չ քրիստոնյա էին, ո՛չ էլ մահմեդական, ո՛չ էլ փորձում էին իրենց հնագույն հավատալիքները[1] *պարտադրել հպատակներին, այլ քաղաքական նկատառումներով, երբեմն էլ ներքին մղումով հակվում էին այս կամ այն կրոնի*[2]*: Ֆրանսիացի պատմաբան Կ. Կահենը*

---

[1] *Լ. Գումիլյովը մոնղոլների կրոնի մասին գրում է, որ այն ունեցել է հստակ ձևավորված աշխարհայացքային մոտեցում: Հեղինակն առանձնացնում է աստվածադավանությունը՝ որպես մոնղոլների հնագույն պաշտամունք, և շամանությունը, որը ծագել է Մանջուրիայում, այնուհետ թափանցել մոնղոլական միջավայր: Ըստ նրա՝ սխալ է մոնղոլների կրոնը շամանություն անվանել (տե՛ս* Л. Н. Гумилев. Поиски вымышленного царства. М., 1970, с. 279–301*):*

[2] *Ուշագրավ է Ոսկե Հորդայի տիրակալների կրոնական ուղղվածության բազմազանությունը. Բաթուն հարում էր շամանության, նրա որդի Սարթախը՝ քրիստոնեության, իսկ Բերկեն ընդունել էր իսլամ: Ընդ որում՝ վերջինիս կողմից իսլամ ընդունելը բացատրվում է միմիայն քաղաքական նպատակներով (տե՛ս* М. А. Усманов. Этапы исламизации Джучиева улуса и мусульманское духовенство в татарских ханствах XIII–XVI веков, Духовенство и политическая жизнь на Ближнем и Среднем Востоке в период феодализма. М., 1985, с. 178*):*

գրում է, որ, ընդհանուր առմամբ, մոնղոլների առաջին սերունդները անտարբեր էին կրոնների նկատմամբ[3]: Քրիստոնյա աշխարհը, այդ թվում և հայերը փորձեցին մոնղոլներին հրամցնել Հիսուս Քրիստոսի ուսմունքը: Երկար ժամանակ մոնղոլները լսում էին տարբեր կրոնների քարոզիչներին, իսկ արդեն Ղազան խանը (1295–1304), որը բուդդայական կրթություն էր ստացել, ընդունեց Մահմուդ անունը ու դարձավ մահմեդական[4]: Նա իսլամ ընդունեց՝ առաջնորդվելով քաղաքական նպատակներով, ինչքան էլ նրա վեզիր, մահմեդականություն ընդունած հրեա ընտանիքի զավակ Ռաշիդ ադ-Դինը փորձել է դարձին կրոնական երանգ հաղորդել[5]: Ղազանի մահմեդական դառնալը խիստ բացասաբար ընդունվեց Իլխանության մաս կազմող Հայաստանում:

Հետազոտողները համակարծիք են այն հարցում, որ Ղազանի դարձի գործում մեծ դեր է ունեցել նրա զորավարներից Նովրուզը, որ հայտնի էր քրիստոնյաների նկատմամբ իր ատելությամբ: Ս. Օրբելյանը հենց նրան է վերագրում քրիստոնյաների նկատմամբ Իլխանության հարուցած հալածանքներն ու բռնությունները, տարբեր երկրամասերում եկեղեցիների ավերումը և այլն[6]: Ժամանակի հայ մատենագրությունն ու ձեռագրերի գրիչներն իրենց հիշատակարաններում անմիջապես արձագանքում են մոնղոլական իշխանությունների կրոնական քաղաքականության փոփոխությանը: 1295 թ. հետո հայերեն ձեռագրերի հիշատակարանները պարբերաբար բողոքում են «նետողական ազգի»՝ մոնղոլների, վարած քաղաքականությունից: 1297 թ. գրված հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Ի չար և ի դառն ժամանակիս, ի բռնակալութեանն Խազանին, որ բազում եկեղեցիք աւերեցան և բազում հայրապետք և քահանայք և ժողովուրդք ի սուր ս[ուս]երի մաշեցին և զայլս գերի [տարան]»[7]:

Ղազան խանը շուտով հրաժարվում է քրիստոնյաներին հալածելու քաղաքականությունից, աքսորում է այդ հարցում նախանձախնդիր Նովրուզին և լծվում երկրում ռեֆորմների իրականացմանը[8] ՝ նպատակ ունենալով ամրապնդել կենտրոնական իշխանությունը: Արդեն 1300 թ. կարինցի մի հայ Ղազան խանին կոչում է «բա[րե]պաշտ և խնամարկու ազգիս քրիստոնէից», և հայտնում՝ թեպետ նա մզկիթ է գնում, սակայն

---

[3] C. Cahen. La Turquie pré-Ottomane, Istanbul, 1988, p. 321.

[4] *Ղազան խանի՝ մահմեդականություն ընդունելու դրդապատճառների մասին տե՛ս* C. Melville. Padshah-i Islam: The Conversion of Sultan Mahmud Ghazan Khan, Pembroke papers 1, 1990, pp. 159–177.

[5] Рашид-ад-Дин. Сборник летописей, т. III, пер. с перс. А. К. Арендса. М.–Л., 1946, с. 162–164.

[6] *Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց (այսուհետև՝ Ս. Օրբելյան), Թիֆլիս, 1910, էջ 472–473:*

[7] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (այսուհետև՝ ԺԳ դար), կազմեց՝ Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 810:*

[8] *Ղազան խանի ռեֆորմների մասին տե՛ս Լ. Հ. Բաբայան. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII–XIV դարերում, Երևան, 1964, էջ 504–524:*

«զսէրն և զգութն ունի առ ազգս քրիստոնէից»[9]: Չի կարելի մտածել, որ գրիչը գովաբանում է Ղազանին նրա իրականացրած ռեֆորմների համար, ամենևին, նա չի մոռանում նշել, որ հարկապահանջությունը սաստիկ է, և երկրում սով է սկսվել[10]: Բանն այն է, որ Ղազանի կառավարման երկրորդ շրջանում քրիստոնյաների նկատմամբ հալածանքները դադարել էին:

Դրությունը փոխվում է, երբ իշխանության է գալիս նրա եղբայրը՝ մկրտությամբ քրիստոնյա՝ Նիկոլաս անվամբ[11], երիտասարդ հասակում բուդդայականություն ընդունած, այնուհետև իսլամի սունիի ուղղության հետևորդ դարձած և հետագայում իսլամի շիա ուղղությունը պաշտոնական կրոն հռչակած Մուհամմադ Խարբանդա (Խուդաբանդա) Օլջեյթու իլխանը (1304–1316)[12]: Եթե Ղազանի մասին, չհաշված նրա կառավարման առաջին տարիները, հայ հիշատակագիրները հիմնականում դրական են արտահայտվում և նույնիսկ ցավում նրա մահվան համար, ապա միանգամայն այլ է նրա եղբոր նկատմամբ գրիչների վերաբերմունքը: Հիշատակագիրները հենց նրա անվան հետ են կապում մոնղոլների իսլամ ընդունելը: Պատահական չէ, որ XIV դ. սկզբի հայերեն ձեռագրերի հիշատակարանները մեկը մյուսի հետևից դառնությամբ արձանագրում են, որ «նետողական ազգը» հեռացել է իր հայրենի հավատից և հետևել «չար աղանդոյն կարապետ նեռին Մահմետի»[13]: Հայկական սկզբնաղբյուրները վկայում են, որ իսլամ ընդունելուց հետո մոնղոլները սկսել են հալածել քրիստոնյաներին՝ ցանկանալով վերացնել քրիստոնեությունը Հայաստանում ու Վրաստանում[14]: Նրանք նաև հրամայում են ոչ մահմեդականներին տարբերակիչ նշաններ կրել[15]: XIV դ. սկզբին, որպես մոնղոլների քաղաքականության արտացոլում, հիշատակարաններում անընդհատ պտտվում են հետևյալ տողերը. «Բռնադատեն զամենեսեան դառնալ ի սնոտի և ի պատիր յոյսն իւրեանց, հալածեն, նեղեն և տառապեցուցանեն՝ զոմանց զինչսն յափշտակելով, զոմն տանջելով, զոմն հայհոյելով, զխաչ և զեկեղեցի նախատելով»[16]:

Աղբյուրները միաբերան պնդում են, որ Խարբանդան հրովարտակ է արձակել և հրամայել կամ «դառնալ ի մոլար օրէնսն Մահմեդի և կամ տալ խարաջ ամէն մարդ իւ-

---

[9] *ԺԳ դար, էջ 861:*

[10] *Նույն տեղում:*

[11] *Ս. Օրբելյանը նշում է Թեոդոսիոս անունը (Ս. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 482):*

[12] ***Տե՛ս*** Öljeitü, Il–Khanid ruler of Iran Encyclopædia Britannica, http://www.britannica.com/biography/Oljeitu:

[13] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (այսուհետև՝ ԺԴ դար), կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 51:*

[14] *Նույն տեղում, էջ 46:*

[15] *Նույն տեղում, էջ 47:*

[16] *Նույն տեղում, էջ 41:*

րոյ գլխոյն Ը (8) դահեկան»[17]: Այսպիսով, նա վերականգնում է դավանանքի համար քրիստոնյաներից գանձվող ջիզյա հարկը, իսկ այն չվճարելու դեպքում քրիստոնյաները պետք է մահմեդական դառնային: Խարբանդան, տեսնելով, որ ժողովուրդը չի ընկճվում ծանր հարկերից ու դառնությունից, հրամայում է «կամ զամենեսեան ներքինիս առեալ, կամ զմի ակն հանել, կամ դառնալ ի կրօնն Մահմէտի»[18]:

Կարինում մոնղոլների հարկահանության մասին պատմող մի ձեռագրում նույնպես ասվում է, որ քրիստոնյաները կամ պետք է «խարաճ» վճարեին, կամ ուրանային իրենց հավատը և դառնային մահմեդական[19]: Աղբյուրի հաղորդմամբ՝ մարդիկ նախընտրում էին ծանր հարկապահանջությունը ու չարչարանքները մահմեդական դառնալուց: Շատերն էլ, չկարողանալով վճարել հարկերը, լքում էին հայրենի բնակավայրերը. «Բազումք տարագիրք եղեալ վասն հարկին»[20]: Այնուամենայնիվ, գրիչ Սարգիսը 1314 թ. տրտմությամբ գրում է, որ Կարին քաղաքի բնակիչներից ոմանք մահմեդական են դարձել. «Ի դանութեանն ազգին Իսմաելացոց Խարպանդային, ի նեղ և ի դառն ժամանակիս, որ անգաւ ազգս Հայոց ընդ լծով հարկի, և չկայ յոյս ապաւինի և ոչ տեղի ապաստանի. և էր աշխարհ յամենայն ի տառապանք և ի յարկապահանջութիւն. և իսպառ նուազեալ էր ազգս Հայոց: Եւ ի քաղաքիս յայսմիկ քակեցին եկեղեցիք բազում, և ոմանք, թողեալ զհաւատս որ ի Քրիստոս, և գնացեալ զհետ անօրինաց Իսմայելացոց ազգի»[21]: Ժամանակագիրներից մեկն էլ փաստում է, որ շատ մարդիկ մահանում են «վասն անուան Քրիստոսի», շատերն էլ դառնում են մահմեդական. «Եւ բազումք զանգիտեալ դարձան ի կրօնս նոցա»[22]: Մեզ հայտնի վերոհիշյալ դեպքերում մահմեդականացման պատճառներն են եղել ինչպես բնակչության նյութական հնարավորությունները գերազանցող հարկերը, այնպես էլ հալածանքները: Հատկապես մեծ դեր էին խաղում հարկերը, որոնք այնքան ծանր էին, որ Կարինում մահմեդականացման մասին ավանդող գրիչը վկայում է, որ մարդիկ ստիպված վաճառում էին սեփական երեխաներին[23]: Ուշագրավ է, որ Սամվել Անեցու շարունակողներից մեկը մահմեդականության ընդունումը հավասար է համարում թուրքանալուն[24]:

---

[17] *Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 381:*

[18] *Սամուէլ Անեցի և Շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 271–272:*

[19] *Հայոց նոր վկաները (1155–1843), աշխատութեամբ՝ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 121–122:*

[20] *Նույն տեղում, էջ 122:*

[21] *ԺԴ դար, էջ 101–102:*

[22] *Սամուէլ Անեցի և Շարունակողներ. նշվ. աշխ., էջ 272:*

[23] *ԺԴ դար, էջ 102:*

[24] *Սամուէլ Անեցի և Շարունակողներ. նշվ. աշխ., էջ 271:*

Արձանագրենք, սակայն, XIV դ. սկզբում որ հայերի մահմեդականություն ընդունումը չի եղել հաճախադեպ, գոնե հրապարակի վրա չկան կրոնափոխության այլ վկայություններ:

Աստիճանաբար հայկական սկզբնաղբյուրները կրոնական հալածանքներից առավել խոսում են ծանր հարկապահանջության մասին: Իսկ հարկ պետք էր հավաքել ավանդաբար, անգամ օտար տիրապետության պայմաններում ապահարկության իրավունք ունեցող եկեղեցիներից, ինչն էլ հայության ու հատկապես հիշատակագիրների շրջանում, որոնց մեծ մասը հոգևորական էր, մեծ դժգոհություն ու զայրույթ է առաջացնում: Ընդ որում, օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից, տեղի պաշտոնյաները չարաշահում էին հարկեր հավաքելու իրենց լիազորությունները: 1318 թ. գրված ձեռագրում ասվում է, որ Աղթամարի Զաքարիա կաթողիկոսին հաջողվում է եկեղեցականներին չհարկելու պայմանավորվածություն ձեռք բերել մոնղոլների հետ: Չնայած դրան՝ Վասպուրական է մեկնում մոնղոլ հարկահաններից բաղկացած 1300 հոգանոց մի խումբ, որ կողոպտում է Վարագավանքն ու Վանի հարակից եկեղեցիները: Մոնղոլները հարկահանության են ենթարկում նաև տեղի մահմեդական բնակչությանը[25]: Այսինքն՝ քրիստոնյաների դեմ մոնղոլական իշխանությունների հարուցած հալածանքների առաջնային նպատակը ոչ թե մահմեդականություն պարտադրելն էր, այլ նրանց ունեցվածքը կողոպտելը, թեպետ, ինչ խոսք, Իլխանության վերջին տարիներին քրիստոնյաների նկատմամբ հալածանքները սաստիկ էին:

Խարբանդային հաջորդած Աբու Սայիդն (1316–1335) ու Արփան մեղմացնում են քրիստոնյաների հալածանքները: Հայ մարդիկ հիմնականում բողոքում են ծանր հարկերից, այն է՝ գլխահարկից, որ մահմեդական իրավունքի համաձայն՝ գանձում էին ոչ մահմեդական բնակչությունից: Հիշատակարաններից մեկում ասվում է, որ «նեղեն զքրիստոնայքս ջիզացով»[26]: Ժամանակակիցներից մեկն էլ դիպուկ է արձանագրում եղելությունը՝ նշելով, որ «հարկ կու տանք վասն Յիսուսի»[27]:

XIV դարի 30-ականներին, երբ Իլխանությունն արդեն իր մայրամուտն էր ապրում, շարունակվում էին քրիստոնյաների հալածանքները: 1333 թ. գրված հիշատակարանում կարդում ենք, որ մոնղոլները քանդում են եկեղեցիները[28]: 1335 թ. Գրիգոր երեցը դժգոհում է, որ քրիստոնյաները եկեղեցի չեն գնում. «յեկեղեցոյ դուռն ոչ երթան»[29]:

Արաբագետ Ա. Խաչատրյանը մատնանշում է հայերի մահմեդականացման մեկ այլ եղանակ, որը պայմանականորեն կկոչենք ոչ բռնի: Ըստ նրա՝ XIII–XIV դդ. երիտասարդական կամ կտրիճների և հատկապես ախի արհեստավորական կազմակերպություն-

---

[25] *ԺԴ դար, էջ 138–139:*

[26] *Նույն տեղում, էջ 151:*

[27] *Նույն տեղում, էջ 226:*

[28] *Նույն տեղում, էջ 255:*

[29] *Նույն տեղում, էջ 269:*

ները (համքարությունները) հող են նախապատրաստել մահմեդականցման համար: Նա կարծում է, որ տնտեսական շահերից ելնելով՝ հայ արհեստավորներն ընդունում էին մահմեդականություն: Վկայակոչելով մահմեդական պատմիչներին՝ գրում է, որ հայտնի սուֆի բանաստեղծ Ջալալէդդին Ռումին Հայաստանում մահմեդական հավատի բերեց բազմաթիվ հայ ռունուդների՝ կտրիճների[30]:

1385–1386 թթ. կարա կոյունլուների առաջնորդ Ղարա Մահմադը հալածում է քրիստոնյաներին, և եթե հավատանք Խաչատուր անունով հիշատակագրին՝ նա քանդել է տալիս 70 եկեղեցի[31]:

XIV դ. վերջին Արևելքը ցնցվում էր Լենկ Թեմուրի արշավանքներից: Գրիգոր Խլաթեցին իր պատմական վիպասանության մեջ, խոսելով 1387 թ. արշավանքի մասին, գրում է.

«Շատք ըզՔրիստոս ուրանային,
Եւ զՄահմետ դաւանէին»[32]:

1389 թ. Աղթամարից Կարապետ գրիչը դեպքերի թարմ ազդեցությամբ գրած հիշատակարանում նկարագրում է, որ Լենկ Թեմուրի զինվորները մտնում են եկեղեցիներն ու բռնությամբ հավատափոխ անում մարդկանց. «Պղծէին զտաճարս, խորտակէին զտուփս խնկոց և հաղորդաց, ուրացուցանէին ի հաւատոյ»[33]: Թեև Լենկ Թեմուրը ցանկանում էր իսլամը դարձնել աշխարհի գերիշխող կրոնը,[34] ու նրա նվաճումները գովերգող Շարաֆ ադ-Դին Ալի Յազիդին էլ իր «Զաֆեր-նամե»-ում նրան անվանում է «հավատի պաշտպան»[35], սակայն հայտնի է, որ նա քանդել է Օմայանների մզկիթը Դամասկոսում, սպանել, գերեվարել ու որպես ստրուկ վաճառել է բազմաթիվ մահմեդականների[36]: Հայկական աղբյուրներն էլ թեպետ Լենկ Թեմուրին կոչում էին «չար բռնաւոր ազգն մահմետական», բայց հաստատում, որ Հայաստանում նա սպանել է թե՛ հայերի, թե՛ մահմեդականների[37]:

Թովմա Մեծոփեցին ուրախությամբ հայտնում է, որ այն հայ իշխանները, որոնք Լենկ Թեմուրի ժամանակ բռնությամբ դավանափոխ են արվել, Ղարա Յուսուֆի (1389–1420)

---

[30] *Ա. Խաչատրյան. Հայերի մահմեդականացումը միջնադարյան Հայաստանում (8–15-րդ դդ.).– «Իրան-Նամէ», 1993, թիվ 1, էջ 26:*

[31] *ԺԴ դար, էջ 562:*

[32] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, (այսուհետև՝ ԺԵ դար) մասն առաջին (1401–1450 թթ.), կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 274:*

[33] *Տե՛ս ԺԴ դար, էջ 579:*

[34] The Cambridge History of Iran, vol. 6, The Timurid and Safavid Periods, Cambridge, 1986, p. 89.

[35] Шараф ад-Дин Али Йазди. Зафар-наме. Книга побед амира Темура, пер. со староузб. А. Ахмедова. Ташкент, 2008, с. 220.

[36] The Cambridge History of Iran, vol. 6, p. 89. *Հայկական աղբյուրների հավաստմամբ էլ՝ Թեմուրը քանդել է Դամասկոսի մզկիթները (տե՛ս ԺԵ դար, մասն առաջին, էջ 3–4):*

[37] *ԺԴ դար, էջ 569:*

որոք վերադարձել են քրիստոնեական հավատի[38]: Չգիտենք՝ արդյո՞ք պատմագրի խոսքը կարելի է տարածել նաև Լենկ Թեմուրի ժամանակ իսլամացված հայ մարդկանց վրա, թե՝ ոչ:

XV դարում Հայաստանում հաջորդաբար իշխեցին երկու թուրքմենական ցեղեր՝ կարա կոյունլուներն և ակ կոյունլուները: Սակայն հարավային շրջանները երկրի ընդհանուր համայնապատկերից տարբերվում էին. այստեղ կային քրդական մի քանի իշխանություններ: Բաղեշում տիրապետություն էր հաստատել Ռոժկի (Ռոժակի, Ռուզակի) քրդական ցեղը, Վանում, Ոստանում ու Հաքքարիում իշխում էր հաքքարի (Շամբոյան, Շամոյան, Շամոանից, Շամո) տոհմը: Քրդեր էին հաստատվել նաև Մոկքում, Աղձնիքում և այլուր: Հայաստանի հարավային շրջաններում, որտեղ բնակություն էին հաստատել քրդերը, արձանագրվել են հայերի մահմեդական դառնալու մի քանի դեպքեր: Քանի որ դրանք կրում են դիպվածային բնույթ, նախ կներկայացնենք դրանք, ապա անդրադարձ կկատարենք թուրքմենական ցեղերի կրոնական քաղաքականությանը:

Ընդունելով թուրքմենական ցեղերի գերիշխանությունը՝ քրդական իշխանություններն ամեն պատեհ առիթի դեպքում ըմբոստանում էին՝ երկրում մշտապես լարված դրություն ստեղծելով: Քրդերն անընդհատ ավարառություն էին կատարում, կողոպտում հայ բնակչությանը: Օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից ու թուրքմենների տիրապետության ընթացքում այդպես էլ չդադարած խռովություններից՝ նրանք հաճախ հարձակվում էին եկեղեցիների վրա: Ընդ որում, եկեղեցիների վրա հարձակվելու առաջնային մղումն ամենևին էլ կրոնական մոլեռանդությունը չէր, այլ պարզապես սպասքին ու հարստությանը տեր դառնալու տենչը:

Երկիրը հյուծվում էր նաև միջցեղային՝ Շամբոյանների ու Ռոժկիների կռիվներից: XV դ. սկզբին Բաղեշի կառավարիչ Շամս-ադ-դինը հարձակվում է Շամբոյան քրդական տան ենթակայության տակ գտնվող Շատվանի վրա և այրում այն: Ի պատասխան՝ Ամիր-Եզդինը կրակի է մատնում Բաղեշի 60 գյուղ[39]: Դժվար չէ ենթադրել, որ այդ արշավանքներից ամենից շատ տուժում է հայ բնակչությունը:

Արդեն Իլխանության անկումից հետո Հայաստանի հարավային շրջաններում գլուխ բարձրացրած քրդերը Աղթամարի Զաքարիա Բ կաթողիկոսից պահանջում են մահմեդականություն ընդունել[40], և մերժում ստանալով, քարկոծելով սպանում են նրան: Նույն ժամանակ քրդերը սպանում են նաև բաղեշցի մի հայի՝ կրկին մահմեդականություն ըն-

---

[38] *Թովմա Մեծոփեցի. Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյան, Երևան, 1999, էջ 119–120:*

[39] *Մանր ժամանակագրություններ, XIII– XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 119:*

[40] *ԺԴ դար, էջ 600–601:*

դունելու[41] պահանջից հրաժարվելու պատճառով: 1398 թ. Ուստանում քարկոծելով նահատակում են մոկացի մի հայ կնոջ՝ Թամարին[42]:

Շարաֆ-խանը քրդերին ներկայացնում է որպես ջերմեռանդ հավատացյալներ՝ նշելով, որ յուրաքանչյուր մահմեդական գյուղում, որտեղ կա երկու-երեք տուն, կառուցված է մեկական մզկիթ, իսկ մարդիկ համատեղ նամազ են անում[43]:

Դատելով «Հայոց նոր վկաներ» ժողովածուում տեղ գտած նյութերից, համոզմունք է առաջանում, որ շատ հաճախ քրդերն են պահանջել հայերից հավատափոխ լինել: Այդ պահանջը մերժած և քրիստոնեության համար կյանքը զոհաբերած հայ նահատակներն ամենից շատ քրդական ցեղերի ենթակայության տակ գտնվող Վանից, Խլաթից, Բաղեշից, Խիզանից են: Ընդ որում, չպիտի կարծել, թե դա պայմանավորված էր տեղի քուրդ իշխանների քրիստոնյաներին կրոնափոխ անելու քաղաքականությամբ. որքան էլ քրդերն իրենց գավառների լիակատար տեր զգային, չէին կարող այս մտադրությունը կյանքի կոչել առանց թուրքմեն տիրակալների համաձայնության: Երբեմն քուրդ իշխանն ավելի հանդուրժողական էր տրամադրված քրիստոնյաների նկատմամբ, քան մահմեդական բնակչությունը: Ապրելով նույն տարածքում, կիսելով նույն առօրյան՝ հայերն ու քրդերը հաճախ էին վեճերի բռնվում: Քուրդը կարող էր ամբաստանել հային, թե հայհոյել է Մուհամմադ մարգարեին, ինչից հետո, նախ պահանջում էին հավատափոխ լինել, ապա մերժում ստանալով՝ սպանում նրան: Վիճակն ավելի էր բարդանում, երբ հայ ընտանիքի անդամներից մեկը մահմեդական էր դառնում, որից հետո պարտադրում էին նաև ընտանիքի մյուս անդամներին էլ կրոնափոխ լինել: Մոլեռանդ հոգևորականությունն ու իշխանները երբեմն հարուցում էին կրոնական հալածանքներ: Բաղեշի քրդական Ռոժկի ցեղից մեկի մասին ասվում է, որ նա ստիպում էր քրիստոնյաներին ուրանալ իրենց հավատը. «Յայնմ ժամանակի էր պարոն քաղաքին ոմն ազգաւ Քուրդ, Շամշատին անուն, և էր չարացեալ ի վերայ ազգիս Հայոց, և բռնադատէր զքրիստոնեայս՝ ուրանալ զՔրիստոս և դառնալ յօրէնս իւրեանց»[44]: Բաղեշի մեկ այլ տիրակալի՝ Իբրահիմի մասին, Մեծոփեցին գրում է, որ ատում էր քրիստոնյաներին և ցանկանում էր վերացնել նրանց հավատը[45], իսկ ահա նրանից առաջ իշխող Շարաֆի մասին պատմիչն ասում է. «սիրող ամենայն քրիստոնէից»[46]: Այսպիսով՝ մահմեդական միջա-

---

[41] *Հայոց նոր վկաները, էջ 152–164:*

[42] *Սամուէլ Անեցի և Շարունակողներ. նշվ. աշխ., էջ 285:*

[43] Шараф-Хан Ибн Шамсаддин Бидлиси. Шараф-Наме, т. I, пер., предисл., примеч. и приложения Е. И. Васильевой. М., 1967, с. 387.

[44] *Հայոց նոր վկաները, էջ 234–235:*

[45] *Թովմա Մեծոփեցի. նշվ. աշխ., էջ 111:*

[46] *Նույն տեղում:*

վայրը ճնշող ազդեցություն էր ունենում հայության վրա: Կարծում ենք, որ վերոհիշյալ քուրդ կառավարիչների բռնություններն անհետևանք չեն անցել:

Այսուհանդերձ, քրիստոնեությունից հրաժարման գործում վճռական նշանակություն էին ունենում ինչպես պարտադրանքն ու հալածանքը, այնպես էլ ծանր հարկապահանջությունն ու սովը:

1424 թ. հայության զանգվածային մահմեդականության դեպք է գրանցվում Հայաստանի հարավային բնակավայրերից մեկում՝ Խիզանում: Ստեփանոս վարդապետն ու Պետրոս քահանան իսլամ են ընդունում, նրանց հետևում են քաղաքի շատ բնակիչներ. «Եւ շատք ի թուլամորթաց գայթակղեցան և անկան յուրացութիւն և մեծ տրտմութիւն ածին ազգիս Հայոց»[47]: Հետագայում այս երկու հոգևորականները զղջում են, վերադառնում հայրենի հավատին, ինչի համար էլ նահատակվում են: Սակայն աղբյուրը լռում է և չի հաղորդում, թե արդյո՞ք հոգևորականների հետ մահմեդական դարձած հայերը կրկին քրիստոնյա են դարձել: Կարծում ենք, եթե վերադարձած լինեին քրիստոնեության, աղբյուրը կհաղորդեր այդ մասին, կներկայացներ նրանց նահատակության պատմությունը: Ընդ որում, մի քանի անգամ շեշտվում է, որ հոգևորականներին հետևել են բազում խիզանցիներ: Խիզանում այդ ժամանակ ապրում էին հայեր ու քրդեր, ուստի իմանալով XV դ. Խիզանի էթնոժողովրդագրական պատկերը՝ կարող ենք ասել, որ այս դեպքում իսլամ ընդունած հայերն աստիճանաբար քրդացել են:

1431 թ. Հայաստանում ու հարակից երկրներում մոլեգնում էր սովը: Թովմա Մեծոփեցին, ներկայացնելով սովի հետևանքով սկսված աղետը, նշում է, որ Քաջբերունիքից բնակչության մի մասը հեռանում է Հայաստանի այլ վայրեր, մի մասը, տեղում մնալով, մահանում սովից: Ոմանք էլ նախընտրում են մահմեդականություն ընդունելու միջոցով փրկվել. «Եւ ոմանք գնացեալ խառնեցան ի քուրդն Բաղիշու, Մշոյ եւ Սասնոյ վասն աղքատութեան եւ սովոյն դառնութեան, եւ ելեալ ի հաւատոց դարձան ի յանհաւատութիւն՝ ավելի քան զՇ. (500) ոգի»[48]: Զանգվածային կրոնափոխության այդ դեպքը, անտարակույս, աղքատության ու սովի հետևանքն էր և ճարահատ քայլ. մահմեդականության

---

[47] *Հայոց նոր վկաները, էջ 247–248: Հետաքրքիր է, որ Հայկական լեռնաշխարհի այլ վայրերում ևս տեղի բնակչության մահմեդականության ընդունումը կապվում է հոգևոր հովվի կրոնափոխության հետ: Ըստ հայկական ավանդության՝ Հայկական լեռնաշխարհի լեռնային շրջաններից մեկի հոգևոր հովիվ Տեր-Սիմոնը հայրենի երկիրը չլքելու ու ժողովրդին կոտորածից զերծ պահելու մտադրությամբ որոշում է ընդունել հարևան ալևիների կրոնը, որին էլ հետևում է տեղի բնակչությունը: Այդ շրջանը Տեր-Սիմոնի անվամբ կոչվել է Դերսիմ (տե՛ս Գ. Հ ա լ ա ջ յ ա ն. Դերսիմի հայերի ազգագրությունը.– Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 5, Երևան, 1973, էջ 249–250): Հայկական ծագման մասին վկայությունը պահպանվել է նաև Դերսիմի՝ մահմեդական դարձած բնակչության շրջանում, ինչի մասին վկայում են այնտեղ այցելած ճանապարհորդի հուշերը. «Բոլորը, գէթ մեծ մասն այն կարծիքն ունին, որ իրենց նախահայրերը հայեր են» (տե՛ս Ա ն դ ր ա ն ի կ. Տէրսիմ, Ճանապարհորդութիւն եւ Տեղագրութիւն, Թիֆլիս, 1900, էջ 161):*

[48] *Թ ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի. նշվ. աշխ., էջ 161–162:*

ընդունումը թեթևացնելու էր հարկերը: Միայն կլինի կարծել, թե նրանք դարձել են մահմեդական և հայ մնացել. բավական է ասել, որ միջնադարում ինքնության հարացույցի դերում ավելի հաճախ հանդես է գալիս «ազգն քրիստոնէից» արտահայտությունը, քան՝ հայ ազգը:

Խիզանի, Սասունի, Բաղեշի պարագայում իսլամացումը հանգեցնում էր քրդացման, ինչի մասին էլ կարծես ակնարկում է Մեծոփեցին: Մենք չգիտենք՝ որքան ժամանակ են նրանք հայախոս մնացել, փորձ արել են արդյոք վերադառնալու քրիստոնեության, թե՝ ոչ: Սակայն քրդական աշիրեթային կառույցի մեջ ընդգրկումը կամ դրանց հովանավորության տակ հայտնվելը գրեթե կասկած չի թողնում, որ մահմեդականացած հայերն աստիճանաբար յուրացրել են քրդական կենցաղն ու սովորությունները, մոռացել մայրենի լեզուն, դարձել քրդախոս և ձուլվել նրանց:

XV դ. սարսափելի դաժան բախտ է վիճակվում հայ ժողովրդին: Լենկ Թեմուրի որդի Շահռուխը հրամայում է իր հպատակության տակ գտնվող բոլոր երկրների քրիստոնյաներին «հանել ի հաւատոց կամ մեռանել»[49]: Նրա այս քաղաքականությունը Մեծոփեցին բացատրում է ոչ թե քաղաքական նկատառումներով, այլ անձնական դրդապատճառներով[50]: Քչերն են հանձն առնում մահը, մեծ մասը հավատափոխ է լինում[51]: Հավատափոխության այս հրամանը վերաբերում է հատկապես Սամարղանդ գերի քշված հայերին, որոնք տեղում իսլամացվում են: Բայց Շահռուխի նախաձեռնած հավատափոխության ալիքը հասնում է նաև Հայաստան: 1437 թ. սևերակցի Մխիթարը հայտնում է, որ Լենկ Թեմուրի որդի Շահռուխը Հայաստանում (ամենայն հավանականությամբ, խոսքը հարավային շրջանների մասին է) մարդկանց հավատափոխ է արել[52], սակայն նրանց թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ չի հայտնում: Տիպական է Լենկ Թեմուրի հաջորդների վերաբերյալ Մեծոփեցու գնահատականը. նա Միրանշահին անվանում է «յոյժ ողորմած եւ բարեբարոյ»[53], իսկ ահա սրա որդուն՝ Օմարին, «ատեցող ազգիս քրիստոնէից»[54]:

Քրդական և թուրքական ցեղերից բացի Տարոնի կողմերում որպես իսլամադավաններ հանդես են գալիս դրմլիները (դելմիկները)՝ զազաները[55]: 1463 թ. Հովհաննես եպիսկոպոսը վերանորոգում է Մշո Սուրբ Կարապետ վանքը: Շրջակայքում բնակվող դրմլիները բողոքում են, թե նա քանդել է մզկիթն ու դրա քարերով վերանորոգել այն: Հայ

---

[49] *Նույն տեղում, էջ 36:*

[50] *Նույն տեղում, էջ 34–36:*

[51] *Նույն տեղում, էջ 36:*

[52] *ԺԵ դար, մասն առաջին, էջ 471:*

[53] *Թ ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի. նշվ. աշխ., էջ 110:*

[54] *Նույն տեղում, էջ 108:*

[55] *Նստարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցւոյ Վարագայ վանուց վանականի (այսուհետև՝ Նստարք Հայոց), Կ. Պոլիս, 1888, էջ 211:*

հոգևորականին ուղարկում են Բաղեշի Շարաֆ ամիրայի մոտ, պահանջում հավատուրացություն, մերժում ստանալով՝ սպանում նրան[56]: Տեղին է նշել, որ քուրդ իշխաններին թուրքմեն տիրակալների տված իրավասությունների մեջ էր մտնում նաև դատական իրավունքը:

Հայերի մահմեդականացման մեկ այլ ճանապարհ էր գերեվարությունը: Չպետք է բացառել, որ տարվելով օտար երկրներ, հեռանալով հայրենի եզերքից՝ միջավայրի պարտադրանքով նրանք մահմեդական են դարձել: 1420-ական թվականներին կարա կոյունլուների առաջնորդ Իսքանդարը (1420–1438) Խիզանից, Բաղեշից և այլ վայրերից գերում է ավելի քան 500 հայի, հիմնականում կանանց և երեխաների: Նրանք քշվում են օտար երկրներ, և ինչպես վկայում է Գրիգոր Խլաթեցին՝

«Ի յայլազգիս խառնակեցան,
Ըզչարութիւն նոցա ուսան.
Աւտարացան և յոռացան,
զհայրենիսըն մոռացան
Ոչ ի կամաց, այլ յակամայ»[57]:

Մեծոփեցին հայտնում է, որ մահմեդական հոգևորականները կարա կոյունլուների պետության ղեկավար Ջհանշահին (1436–1467) առաջարկել են հարկ ու խարաջ դնել քրիստոնյաների վրա, որպեսզի վերջիններս ուրանան իրենց կրոնը և մահմեդական դառնան: Պատմիչը հայտնում է, որ Ջհանշահը ծանր հարկեր ու խարաջ սահմանեց քրիստոնյաների վրա՝ հույս ունենալով, որ բազում «նեղութեանց դարձցին ի կրօնս իւրեանց»[58]: Սակայն նրա կառավարման ժամանակ՝ 1441 թ., կաթողիկոսական աթոռի վերադարձն էջմիածին ու 1465 թ. Սմբատ Սեֆեդինյանին թագավոր օծելը բավական են փաստելու, որ նա չուներ քրիստոնյաներին հավատափոխ անելու ծրագիր: Դա վերաբերում է հատկապես երկրի հարավային գավառներին, որտեղ հաստատված քրդական ցեղերի դեմ պայքարում կարա կոյունլուների առաջնորդը, կարծես, ցանկանում էր ստանալ նաև հայերի օգնությունը: Հնարավոր է նաև, որ Ջհանշահի այս մոտեցումը որոշ չափով պայմանավորված էր ոչ միայն քաղաքական առաջնահերթությամբ, այլև կարող է որոշակիորեն կապ ունենալ նրա դավանական կողմնորոշման՝ շիա լինելու հետ: Վ. Մինորսկին գրում է, որ կարա կոյունլուները ծայրահեղ շիաներ էին, այդ պատճառով էլ օրթոդոքս պատմագրությունն ատելությամբ է լցված նրանց նկատմամբ և նրանք մեղադրվում էին հերետիկոսության մեջ[59]:

---

[56] *Հայոց նոր վկաները, էջ 299–303:*

[57] *ԺԵ դար, մասն առաջին, էջ 285:*

[58] *Թ ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի. նշվ. աշխ., էջ 215–216:*

[59] V. M i n o r s k y. La Perse au XVe siecle entre la Turquie et Venise, Paris, 1933, p. 4.

Խիզանում գրված հիշատակարաններից մեկը դիպուկ բնորոշում է ոչ քրիստոնյա տիրակալների վերաբերյալ տիրող դարաշրջանի մտածողությունը: Այսպես, հիշատակագիրը գովում է Ջհանշահին՝ ասելով, թե նրա օրոք բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվել ու նորոգվել, և խաղաղություն էր տիրում Հայոց աշխարհում: Տպավորություն կարող է ստեղծվել, թե երկրում, իսկապես, հանգստություն էր ու անդորր, այնինչ նույն գրիչը նշում է, որ Ջհանշահի զորքը գերել է և սպանել մարդկանց, ավերել գավառներ ու երկրում սով էր[60]: Նա պարզապես նկատի ունի, որ Ջհանշահը քրիստոնյաներին իրենց կրոնի համար չի հալածում և միայն դրա համար է դրվատանքի խոսքերի արժանացնում: Կա նաև հարցի հակառակ երեսը. հաճախ հայ հիշատակագիրները հայտնում են, որ այս կամ այն տիրակալը սպանում կամ կողոպտում է քրիստոնյաներին, ինչը, սակայն, դեռ չի նշանակում, թե այդպես է վարվում, որովհետև մահմեդական է:

Կառավարման սկզբնական շրջանում հայերին կրոնական հալածանքների ենթարկելու շեշտված քաղաքականություն չէր որդեգրել թուրքմենական մյուս ցեղի՝ ակ կոյունլուների տիրակալ Ուզուն Հասանը (1453–1478): Վերջիններս, ի տարբերություն կարա կոյունլուների, սունիներ էին: Ըստ Հ. Մանանդյանի՝ Ուզուն Հասանը հանդուրժողական վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ[61]: Բաղեշի Շարաֆյան տոհմի դեմ արշավանքի ժամանակ նա կոտորում է բազում քրդերի և հայերին չի գերում. «Հայոց ազգիս յոյժ ողորմած է, զի գերի ոչ առնէ»[62]: Բայց սա ամենևին չի նշանակում, թե Ուզուն Հասանը հատուկ համակրանք էր տածում քրիտոնյաների նկատմամբ: Նրա վերաբերմունքը պայմանավորված էր լոկ քաղաքական առաջնահերթությամբ. նա ցանկանում էր քրդական իշխանություններին ճնշելու գործում հայերի համակրանքը, միգուցե նաև օժանդակությունը ստանալ: Այն, որ հայերի նկատմամբ նման դիրքորոշումն աղերս չուներ վերջիններիս կրոնական պատկանելության հետ ու բացառապես թուրքմենական իշխանության ռազմաքաղաքական շահերի արտահայտությունն էր, հաստատվում է Ուզուն Հասանի՝ Վրաստան կատարած արշավանքով, որի ժամանակ բազմաթիվ եկեղեցիներ են քանդվում[63]:

Ի. Պետրուշևսկին գրում է, որ 1468 թ. կարա կոյունլուներին պարտության մատնելուց հետո Ուզուն Հասանը սկսեց հենվել մահմեդական հոգևորականության վրա: Հատուկ հարգանք տածելով դազիների, ուլեմաների ու մահմեդական հոգևորական այլ ներկայացուցիչների նկատմամբ՝ նա Թավրիզում և այլ քաղաքներում կանգնեցրեց մզկիթներ ու մադրասաներ, ինչպես նաև մահմեդական հոգևորականությանը սոյուր-

---

[60] *ԺԵ դար, մասն երկրորդ, էջ 271:*

[61] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 411:*

[62] *ԺԵ դար, մասն երկրորդ, էջ 365:*

[63] *Նույն տեղում, էջ 425:*

դալներ (շնորհում, պարգևում, թուրքմենական պետությունների կողմից տրվող ժառանգական կալվածքներ) տվեց[64]:

Պատահական չէ, որ արդեն Ուզուն Հասանի կառավարման վերջին տարիներին հայ հիշատակագիրները բողոքում են հարկապահանջությունից. «Յամենայն կողմանց նեղեն և չարչարեն զազգս քրիստոնէից ազգն տաճկաց. ի հարկապահանջութիւն, ի գերութիւն, ի սով, ի սուր և յայլ ազգի ազգի վիշտս և ի տառապանս նեղիմք»[65]: Բացի այդ, հայտնում են, թե նա կապույտ նշան է դրել քրիստոնյաների վրա, արգելել եկեղեցու զանգերի դողանջը[66]: Մի հիշատակարանում ասվում է, որ Ուզուն Հասանը ոսկի և արծաթ է պահանջել հայերից ու հրամայել հատուկ նշաններ կրել[67] մահմեդականներից տարբերվելու համար: Չի բացառվում, որ քրիստոնյա հպատակները ծանր հարկերից ազատվելու նպատակով մահմեդականություն են ընդունել կամ որ ավելի հավանական է՝ ներկայացել որպես մահմեդական, և այդ միտումը կանխելու համար է, որ Ուզուն Հասանը պարտադրել է տարբերակիչ նշաններ կրել[68]: Թեպետ մեր ձեռքի տակ հայերի մահմեդականություն ընդունելու վերաբերյալ տեղեկություններ չկան, սակայն չի բացառվում, որ նման դեպքեր եղել են:

Քրիստոնյաների նկատմամբ քաղաքականությունն ավելի է խստացնում Ուզուն Հասանի որդին՝ Յաղուբը (1478–1490), թեպետ նրա կառավարման սկզբում՝ 1481 թ., վերանորոգվում է Կտուց կղզու Սուրբ Կարապետի գմբեթը: Ուշագրավ է, որ գմբեթի կառուցումը մահմեդականները խիստ դժգոհությամբ են ընդունում, ինչպես նշում է ժամանակակիցներից մեկը՝ կրճտացնում էին ատամները[69]: Աղբակի Էրնկանի գյուղում 1483 թ.

---

[64] И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв. Л., 1949, с. 150.

[65] *ԺԵ դար, մասն երկրորդ, էջ 397:*

[66] *Նույն տեղում, էջ 394: Այն, որ ընդամենը մեկ հիշատակարան է հայտնում Ուզուն Հասանի կողմից զանգերի դողանջի արգելքի ու տարբերակիչ նշան դնելու մասին, փոքր-ինչ տարակուսանք է առաջացնում: Մյուս գրիչները խոսում են ծանր հարկերի մասին, սակայն եկեղեցու զանգերի դողանջի ու նշանի մասին լռում են: Հետաքրքիր է, որ 1476 թ. խոսվում է Վանի սուրբ Պողոս եկեղեցու գմբեթի ու ժամատան վերականգնման մասին (տե՛ս նույն տեղում, էջ 403–407):*

[67] *Նույն տեղում, էջ 394:*

[68] *1441 թ. Սեբաստիայի Մարզվան գավառի Խտրշան բնակավայրում տեղի ունեցած անչափ հետաքրքիր մի անցքի վերաբերյալ պահպանվել է վկայություն, որը ցույց է տալիս, որ հայերը, հագնվելով մահմեդականներին բնորոշ ձևով կամ կրելով սոսկ մի ատրիբուտ, կարող էին անճանաչելի լինել անծանոթների կողմից: Այսպես, մահմեդականները ճանապարհ գնալիս չեն հասկանում, որ անցորդը ոչ թե թուրք է, այլ հայ, քանի որ նա գլխին ճերմակ փաթթոց ուներ: Դեպքը բացահայտվելուց հետո քրիստոնյաներին հրամայվում է չկրել ճերմակ փաթթոց. «Եւ յայնմ օրէ զճերմակ չալման վերացուցին ի գլխոց քրիստոնէից» (տե՛ս Սամուէլ Անեցի և Շարունակողներ, էջ 290):*

[69] *ԺԵ դար, մասն երրորդ, էջ 12:*

գրված հիշատակարանում կարդում ենք. «Ի յայսմ ամի նշան դրին քրիստոնէիցս, և զժամ զարնուլն խափանեցին»[70]: Յաղուբն արգելում է նաև քրիստոնյաներին ձի հեծնել, նրան անվանում են քրիստոնյաների հալածող: Հայ հիշատակագիրները վկայում են, որ նրա հրամանով եկեղեցիներ են քանդվել[71]: Յաղուբի ժամանակ այնքան վատ էր մարդկանց դրությունն ու այնքան ծանր հարկապահանջությունը, որ մարդիկ անգամ սեփական մահն էին կամենում[72]: Փորձելով ամրապնդել շարիաթի օրենքները՝ նա սոյուրղալներ է բաժանում մահմեդական հոգևորականությանը[73]: Ուշագրավ է Յաղուբի կառավարման տարիներին տեղի ունենցած հետևյալ դրվագը. Կոտայքում 40 հայ ազատորդիներից պահանջում են մահմեդական դառնալ, սակայն նրանք հրաժարվում են ու կարողանում խուսափել մահից[74]: Ճիշտ է նկատում Հ. Մանանդյանը՝ գրելով, որ առաջին հերթին ազնվականներից ու ականավոր անձանցից էին պահանջում մահմեդական դառնալ[75]:

Չենք կարող ասել՝ Վանում իսլամ ընդունելու համաժամանակյա դեպքը կապված է Յաղուբի քաղաքականության հետ, թե՝ ոչ: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հենց նրա կառավարման տարիներին է կրկին երևան գալիս դեռ Մուհամմադ Խարբանդայի ժամանակներից հայտնի քրիստոնյաների հալածքների մասին պատմող վերը հիշված արտահայտությունը, որ ցուցիչ է, որ նրա կառավարման տարիներին քրիստոնյաների նկատմամբ հալածանքները խստացել էին: Շատ դեպքերում իսլամ պարտադրողի դերում կարող էին հանդես գալ թուրքմենական ավազանին, տեղական կառավարիչները, մահմեդական բնակչությունը: Հայտնի է, որ Թավրիզում Յաղուբը սպանում է ազգությամբ հայ Խոջա Միրաքին նահատակողներին, որոնք պահանջել էին նրանից մահմեդական դառնալ: Նա պատժում է նաև մոլեռանդ մահմեդականներին, որոնք Միրաքի նահատակությունից հետո փորձել էին քանդել հայկական եկեղեցին[76]: Տպավորություն է ստեղծվում, որ շիիզմին հակված կարա կոյունլուները և սուննիզմին հարող ակ կոյունլուները չունեին այն ընդգծված կրոնական քաղաքականությունը, ինչին ականատես էինք դառնալու հաջորդ դարերի ընթացում, երբ ասպարեզ էին իջնելու Սեֆյաններն ու օսմանցիները: Այսինքն՝ նրանք հանդես չէին գալիս բացառապես իսլամի երկու ճյուղերից մեկի պաշտպանությամբ, որպեսզի կարողանային իրենց շուրջ համախմբել կրոնական տարբեր հայացքներ ունեցող թուրքմենական ցեղերին: Կարծում

---

[70] *Նույն տեղում, էջ 50:*

[71] *Նույն տեղում էջ 145:*

[72] *Նույն տեղում, էջ 98:*

[73] И. П. Петрушевский. *Նշվ. աշխ., էջ 150:*

[74] *ԺԵ դար, մասն երրորդ, էջ 110:*

[75] *Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 413:*

[76] *Նույն տեղում, էջ 412–413:*

ենք՝ քաղաքական առաջնահերթությամբ էր պայմանավորված նաև քրիստոնյաների նկատմամբ նրանց վերաբերմունքը:

XV դարի ընթացքում, բացի զանգվածաբար մահմեդական դառնալու վերաբերյալ մի քանի տեղեկություններից, հայտնի են հայ անհատների կողմից իսլամ ընդունելու մասին հատուկենտ վկայություններ: Դարասկզբին Վանում մահմեդական է դառնում Միրանոս անունով մեկը. «զՔրիստոս ուրացաւ և տաճկացաւ»[77]: Ավելի ուշ Խիզանում իսլամ է ընդունում մի հայ կին[78], այնուհետև քրիստոնեությունից հրաժարվում է Մուրատ Վանեցու հայրը[79]:

Իսլամացման կարող էր հանգեցնել նաև մահմեդականների հետ ամուսնությունը, թեև աղբյուրներն այս առումով սակավախոս են: Մանր ժամանակագրություններից մեկում ասվում է, որ քրդերն առևանգել են Շամամ անունով մի հայ կնոջ[80]: Հիշատակարաններից մեկից հայտնի է, որ մի հայ կին ամուսնանում է մահմեդականի (քուրդ) հետ, սակայն հրաժարվում է մահմեդականություն ընդունել, ինչի պատճառով ամուսնու ազգականները նրան սպանում են[81]:

Կային հայ հոգևորականներ, որոնք հավատարիմ իրենց առաքելությանը՝ քրիստոնեություն էին քարոզում նաև մահմեդականներին: Այդպիսի դժվարին պարտականություն էր իր ուսերին վերցրել Գրիգոր վարդապետը[82]:

XV դարի հայ իշխանական տների որոշ անդամներ հավատափոխ են եղել իրենց հողատիրական իրավունքը պահպանելու նպատակով[83]: Նրանց համար հատկապես բացասական նշանակություն է ունեցել «բեյթ-ուլ-մալ»-ի ինստիտուտը, որը հաճախ հանգեցնում էր հայ իշխանների տիրույթների բռնագրավմանը հօգուտ մահմեդական համայնքի[84]: Այս երևույթը նախևառաջ վերաբերում է Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններին: Հարավարևմտյան Հայաստանի իշխանական տների՝ մահմեդական դառնալու մասին մեզ սկզբնաղբյուրային վկայություններ հայտնի չեն: Այդ մասին ակնարկային ու որոշակի տվյալներ են հայտնվում հետագա դարերում, մի մասն էլ սոսկ ենթադրություններ են և, ըստ երևույթին, բարեմիտ հորինվածքներ, ու դուրս են քննարկվող նյութի շրջանակից:

---

[77] *Հայոց նոր վկաները, էջ 200:*

[78] *Նույն տեղում, էջ 309:*

[79] *Նույն տեղում, էջ 320:*

[80] *Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. V, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1971, էջ 97:*

[81] *Նօտարք Հայոց, էջ 47–48:*

[82] *Թ ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի. նշվ. աշխ., էջ 94:*

[83] *Ա. Տ ե ր - Ղ և ո ն դ յ ա ն. Մահմեդական ամիրությունների բացասական դերը միջնադարյան Հայաստանի ճակատագրում.–Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 614:*

[84] *Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն. «Բեյթ-ուլ-մալ»-ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում.– ՊԲՀ, 1958, - 2, էջ 193–203:*

Տ. Դալալյանը հմտորեն ցույց է տալիս, որ Հարավարևմտյան Հայաստանի իշխանական տների անվանումները պահպանվել են քրդական ցեղանուններում: Ուշագրավ է, որ այդ քրդական ցեղերի բնակության արեալն մեծ ի մասամբ համընկնում է հայ իշխանական տների տիրույթների հետ[85]: Լիովին համամիտ ենք հեղինակի այն եզրահանգմանը, ըստ որի՝ բոլոր դեպքերում չպիտի տեսնել ծագումնաբանական ընդհանրություն. «Սրանից, անկասկած, չի հետևում, թե թվարկված բոլոր դեպքերում կարելի է ծագումնաբանական ընդհանրություններ տեսնել ներկա և նախկին ցեղային իրադրությունների միջև. ամենևին ոչ: Պարզապես ուշագրավն այն է, թե ինչպիսի կենսունակություն են դրսևորել հին ցեղանուններն ու տոհմանունները՝ անգամ տարածաշրջանի էթնիկ, վարչական և կրոնամշակութային իրադրության փոփոխության պայմաններում»[86]:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ թեպետ XIV–XV դդ. հայության մահմեդականացումը զանգվածային բնույթ չի կրել, և չկան որևէ գավառի ամբողջական մահմեդականացման դեպքեր, այնուհանդերձ, պատմության էջերում արձանագրված են հայերի՝ թե՛ անհատական, թե՛ խմբային իսլամացման օրինակներ:

Ի մի բերելով առկա տվյալները՝ գալիս ենք այն համոզման, որ հատկապես XV դ. ուժերից վեր հարկերն ու սովն են հայերի մահմեդականացման հիմնական պատճառները:

Հետաքրքիր է, որ երբեմն ուղղակի կամ անուղղակի կերպով մատենագիրներն իսլամ ընդունելն ու երկրից հեռանալը հակադրում են իրար: Տպավորություն է ստեղծվում, որ հալածանքների ու տնտեսական ծայրահեղ վատ դրության հետևանքով ժողովուրդը երկընտրանքի առաջ էր. կա՛մ մահմեդականություն ընդունելով ապրել հայրենի եզերքում, կա՛մ օտար ափերում փնտրել բախտը: Այսպիսով՝ պետության բացակայության պայմաններում հայությունից առանձին բեկորներ միշտ էլ պոկվել են՝ ձուլվելով այլ ժողովուրդներին, մասնավորապես, քրդերին և թուրքերին: Հայաստանի հարավային շրջանների օրինակով կարող ենք փաստել՝ մահմեդականացումն երկրի էթնոժողովրդագրական պատկերի փոփոխության վրա թեպետ ոչ վճռական, սակայն որոշակի ազդեցություն ունեցել է, քանի որ իսլամացումն օտարացում էր էթնիկ ակունքներից ու հանգեցնում էր քրդացման:

Ժամանակակիցները քրիստոնեությունից հրաժարումն ու մահմեդականության ընդունումը դիտարկել են միմիայն որպես ուրացություն և դավաճանություն: Այնուհանդերձ, նկատելի է, որ մահմեդականություն ընդունելու մասին մատենագիրները հաղորդում են ափսոսանքով ու ցավով՝ հասկանալով, որ հայության մեծ մասը հարկադրված է այդ քայլին գնացել: Ինչքան էլ «գայթակղիչ լիներ» մահմեդական դառնալը՝ հայ ժողովրդի գերակշիռ մասը չի հրաժարվել քրիստոնեությունից, հետևաբար և ազգութ-

---

[85] Տե՛ս Տ. Դ ա լ ա լ յ ա ն. *Հայ իշխանական տների հետքերը Հարավարևմտյան Հայաստանում (քրդական որոշ ցեղանունների և ցեղերի ծագման հարցի շուրջ).– ՊԲՀ, 2004, -2, էջ 174–196:*

[86] *Նույն տեղում, էջ 195:*

յունից՝ մնալով Հայաստանի հարավային շրջանների բնակչության ճնշող մեծամասնությունը:

СЛУЧАИ НАСИЛЬСТВЕННОЙ ИСЛАМИЗАЦИИ АРМЯН И ПРИНЯТИЯ ИМИ МАГОМЕТАНСТВА В XIV–XV ВЕКАХ
(На примере южных областей Армении)

ГОР ЕРАНЯН

Резюме

В XIV–XV веках в южных областях Армении доминирующая часть армянского народа не отказалась от христианства, тем не менее, в вышеуказанном периоде зафиксированы случаи как индивидуального, так и группового обращения армян в ислам. Причинами принятия магометанства явились голод, тяжелые налоги, а также угнетение и принуждение со стороны магометан. В южных округах Армении, где в качестве магометан были представлены курды, исламизация привела к курдификации и в некоторой степени повлияла на этнодемографическую картину страны.

THE CASES OF FORCIBLE ISLAMIZATION AND CONVERSION TO MUSLIM OF THE ARMENIANS IN THE 14th–15th CENTURIES
(On the example of the Southern regions of Armenia)

GOR YERANYAN

Summary

In the 14th–15th centuries in the Southern regions of Armenia most of the Armenians never abandoned Christianity, but there were reported cases of individual and group level Islamization of the Armenians. The reasons for Muslimization were famine, heavy taxes, as well as prosecutions and enforcements. In the Southern regions of Armenia where the Kurds were representatives of Muslim, the Islamization led to Kurdisation and partially affected on the ethno-demographic image of the country.